

Ի. Ֆ. ՊԵՐՍ

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ
ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖԻ ՑԵՎ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻ ԴԵՄ

616.9
Դ-53

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1938

30 JUL 2010

616.9.

Ի. Ֆ. ՊԵՐՈ

Դ-53

ար

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ
ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻՖԻ ՅԵՎ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻ ԴԵՍ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՍՏԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՎԱՆ 1938

22 JUL 2013

7279



1785
39

Տասննիներուրդ գարի միծ գիտնական Վիլ-
խովը մի անգամ հայտաբարեց, թե Ռու-
սաստանում առանց ցարական ինքնակա-
լության տապալման վարակիչ հիվանդու-
թյունների համաձարակներն անհնար ե-
նվազեցներ.

Յեթե ցարական Ռուսաստանը կապիտալիստական մյուս յերկրների շարքում իր արդյունաբերությամբ, տեխնիկայով, գիտության զարգացման մակարդակով և կուլտուրայի մյուս ցուցանիշներով գրավում, եր վերջին տեղերից մեկը, ապա վարակիչ հիվանդությունների թվով և մահացությամբ գրավում եր առաջին տեղերից մեկը:

Յեզ ուրիշ կերպ լինել չեր եւ կարող:

Վարակիչ հիվանդություններն անկուլտու-
րականության, ակասանիտարական պայ-
մանների, ժողովրդի լայն մասսաների տը-
զիտության և կյանքի նյութական ցածր
մակարդակի մշտական ուղեկիցներն են:

Յերկրի ինդուստրացման բուռն աճը,
գյուղատնտեսության կուեկտիվացման հա-
ջողություններն տպահ զեցին ԽՍՀ Միու-
թյան վրթխարի հաղթանակները: Սոցիա-
լիզմը մեր յերկրությունն ու աղքատությունը լիովին
վերացված են: Անընդհատ աճում ե աշխա-
տավորության նյութական բարեկիցու-
թյունը: Համարյա լիովին վերացված ե
անզրագիտությունը: Այդ հսկայական պատ-
մական հաղթանակներն իրենց արտացո-
լումն են գտել մեր գարաշրջանի մեծա-
գույն փաստաթթիք՝ Ստալինյան Սահմա-
նադրության մեջ:

Սրա հիման վրա մեղ մոտ խիստ նվա-
զել են ընդհանրապես հիվանդությունները,

և մասնավորապես վարակիչ հիվանդու-
թյունները:

Սեր զբարձրակի նպատակն է ընթերցողին
գաղափար տալ վորովայնի տիֆի և դիղեն-
տերիայի դեմ պատվաստումների մասին,
ոլտավաստումների ոգուտի մասին:

Նախքան հակավորվայնատիֆային, և
հակադիգենստերային պատվաստումների մա-
սին խոսելը, համաստակի պատմենք, թե
ինչ ե վորակիչ հիվանդությունը և մաս-
նավորապես վորովայնի տիֆն ու դիղեն-
տերիան:

ԻՆՉՊԻՍԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՐՎԱԿՈՒՄ ԵՆ ՎԱՐԱԿԻՑ

Վարակիչ հիվանդություններն առաջտ-
նում են մանրագույն կենդան եյակներից,
վորոնք կոչվում են միկրոբներ: Միկրոբ-
ներն այնքան փոքր են, վոր հասարակ աչ-
քով նրանց տեսնել չենք կարող: Միկրոբ-
ները լավ տեսանելի յեն դառնում, յերբ
նրանց դիտում են հատուկ զործիք՝ միկ-

բոսկոպի (մանրաղիտակի) ոգնությամբ։
Միկրոսկոպը բաղկացած ե խիստ մեծացնող
ապակիներից, վորոնք առարկան մեծաց-
նում են մի քանի հարյուր և նույնիսկ
մի քանի հազար անգամ։

Միկրոբներ շատ են տարածված ընու-
թյան մեջ։ Բացի վարակիչ հիվանդու-
թյունների միկրոբներից՝ կան նաև մարդու-
համար ոգտակար միկրոբներ, որինակ՝
խմբում առաջացնող, կաթը մակարդող և
այլ միկրոբներ։ Հաց թիելիս գործ ածվող
խաշը (drojžki) նույնպես միկրոբներ են։

Յեթե վորեն վարակիչ հիվանդության
միկրոբներ ընկնեն մարդու որգանիզմի
մեջ և այնտեղ բազմաւան, ապա մարդը
կարող է հիվանդանալ այդ հիվանդությամբ։

Վարակիչ հիվանդությունները հիվանդ
մարդուց առողջին են անցնո՞մ կամ հի-
վանդի ու նրա արտազատումների հետ ան-
մեջականորեն շփելու, կամ վարակիչ հի-
վանդությունների միկրոբներով վա-
րակված հողի, ջրի, սննդամթերքների։

անային իրերի, հագուստի և այլնի միջո-
ցով։ Սակայն միկրոբներն ընկնելով որգա-
նիզմի մեջ, վոյ ամեն անգամ են հիվան-
դություն առաջանում։ Սովորաբար մար-
դու որգանիզմը գիմաղրություն և ցույց
տալիս իր մեջ ընկած վարակին և նրանից
պաշտպանվելու շատ միջոցներ ունի։ Որ-
դանիզմի պաշտպանողական ընդունակու-
թյունները կարելի յե առաջացնել և ու-
ժեղացնել արհեստականորեն պատվաս-
տումների միջոցով։

Վորքան մարդն առողջ ե, վորքան լավ
են այն պայմանները, վորոնց մեջ նա
ապրում ե (բնակարան, սնունդ, աշխա-
տանքի և հանգստի պայմաններ), վորքան
սա մաքուր ե ապրում, այնքան որգա-
նիզմը հեշտ է հաղթահարում իր մեջ ըն-
կած միկրոբներին և վոչնչացնում նրանց։

Անա, թե ինչու մեր յերկրի աշխատավո-
րական լայն մասսաների բարեկեցության
բարելավումը և նյութական ու կուտա-

բական մակարդակի բարձրացումն անշեղութեն նվազեցնում են վարակիչ հիվանդությունները:

ՎՈՐՈՎԱՅՆԻ ՑԻՑ ԾԵՎ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱ.

Վորովայնի տիֆն ու դիղենտերիան (արյունալուծ) մարդու ամբողջ որդանիգմիք վնասող շատ ծանր վարակիչ հիվանդություններ են: Նրանք հաճախ տարածվում են վորպես համաճարակ, այսինքն՝ միանգամից ընդունում են տվալ զյուղի, քաղաքի բընակչության մեծ քանակություն:

Վորովայնի տիֆի և դիղենտերիայի առանձին դեպքեր պատահում են ամբողջ տարվա ընթացքում, բայց ամառաւին և աշնան ամիսներին նրանք առանձնապես շատ են տարածվում: Այսպես, դիղենտերիայով հիվանդանալու ամենաբարձր ժամանակը լինում է հուլիսին—ոգոստոսին, իսկ վորովայնի տիֆով, սեպտեմբերին —

հոկտեմբերին, Հետո հիվանդացումների թիւ վը հետագիտե սկսում է նվազել:

Այդ հիվանդություններն առաջացնող միկրոբները լավ ու սումնասիրված են: Հալունի, որինակ, վոր վորովայնի տիֆի միկրոբները կարող են բաղմանալ և ապրեցրում մինչև մի քանի շաբաթ, իսկ կաթի մեջ (վոր նրանց համար հանդիսանում են հատկապես լավ սննդաբար սիջավայր) — մինչև 4 ամիս:

Վորովայնի տիֆով հիվանդի մեղով կամ կղկղանքով կեղոտուած պահտակեղենի վրա միկրոբներն ապրում են 2—3 ամիս: Գիշենտերիայի միկրոբները նույնպես կարող են ապրել և բաղմանալ ջրում, կաթի մեջ, առանց զանազան կաթնամթերքներում, հացի, բանջարեղենների, մրգերի վրա, հողի մեջ և այլն: Այս ասածից պարզ է, թե վարակը փոխանցելու և վորովայնատիֆն ու դիղենտերիան տարածելու մեջ ինչքան խոշոր նշանակություն կարող են ունենալ ջուրն ու սննդաբերքները (հատկապես կաթը), յեթե նրանք

վարակված են այդ հիվանդությունների
միկրոբներով:

Միկրոբը մարդու որգանիզմի մեջ ընկնե-
լուց հետո մարդն անմիջապես չի հիվանդա-
նում: Անցում և փորոշ ժամանակի, փորի ըն-
թացքում միկրոբները բազմանում են որ-
գանիզմի մեջ և հետզհետե հաղթահարում
նրա զիմաղրությունը: Որգանիզմը միկրոբ-
ներով վարակվելուց մինչև հիվանդությունը նը-
յերեալու մոմենտը յեղած ժամանակամիջոցը
կոչում և ծածկ աշբ ջան, կամ հիվանդու-
թյան ինկուբացիոն շրջան: Վորովայնի
տիֆի դեպքում ծածկաշրջանը տևում է 2—3
շաբաթ, իսկ դիղենտերիայի դեպքում՝ 2—
5 որ:

Վորովայնի տիֆն սկսում է թեթև աը-
կարությամբ, զլիում զգացվում և ծանրու-
թյուն և ցավ, սկսվում և անքնություն և
հիվանդը շուտ հոգնում է: Որըստոք ցերսաստիւանը բարձրանում է և հիվան-
դության առաջին շաբաթվա վերջում հաս-

նում է 40 և ավել աստիճանի: Նման Բալ-
ձըր ջերմաստիճանը մնում է 10—12 որ:

Որեցոր վատանում է նաև հիվանդի ընդ-
հանուր գրաւթյունը: Գլուխն ուժեղ ցավում
է, զիտակցությունը մթագնում (արփ բառը
հայերեն թարգմանությամբ նշանակում է
ծուխ, մառախուզ, զիտակցության մթագ-
նում): Հիվանդը հաճախ զառանցում է
(հատկապես զիշերները): Հիվանդն անկող-
նում տանջվում է: Նրա շրթաւնքները չոր
են լինում, ճարճքված, լեւուն՝ փառակա-
լած, կարմիր ծալրով և յեղբերով, փորկա-
պություն և ունենում իսկ յերբեմն ել փոք-
հարինը, լսու փորում կղկղանքը նման է
լինում սիսեռապուրի: Արգուսի ծանր վի-
ճակում հիվանդը սովորաբար մնում է 10—
12 որ: Հիվանդության մոտավորապես 8—
10-րդ որը հիվանդի մարմինի վրա (ամենից
հաճախ փորի վերին կեսի վրա, յերբեմն ել
կըծըին, մեջքին, աղդրին) հաճախ ցան և յե-
րեվում առանձին կլոր, կարմիր բծերի ձեռք:

Ցերսարդ շաբաթի վերջից հիվանդի գրու-

թյունն սկսում ե լավանալ: Նրա զիտակ-
ցությունը պարզգում ե: Զերմաստիճանը
հետզհետե իջնում ե, ախորժակը բացգում ե
և մարդը կյանքին ե վերադառնում, թեզետ
և վասնգը դեռ անցած չի լինում, փորավ-
ճեան հնարավոր են ձանր բարդություններ:

Վորովայնի տիֆի ժամանակ խիստ տու-
ժում են բարակ աղիքները, նրանցում զո-
յանում են խոր խոցեր, վորոնք կարսղ են
քայլայիլ աղիքի պատը և վորովայնի ժա-
նացու բորբոքում առաջացնել, կամ վասել
աղիքային պատով անցնող արյունատար
անոթները: Այս զեպքում լինում են ներ-
քին վտանգավոր արյունհոսություններ,
վորոնց հետեւանքով յերենն հիվանդը մա-
հանում ե, թեկուզ նա արգեն զանգում ե
առողջացման ճանապարհն: Սըանք աւենա-
ծանը բարդություններն են վորովայնի
տիֆի ժամանակ: Մյուս բարդությունների
վրա մենք կանգ չենք առնի, թեզետ և
նրանք ել բարական հաճախ են լինում (թո-
քերի բորբոքում, լեզապարկի բորբոքում
պակելախոցեր և այլն):

Վորովայնի տիֆով ամենից հաճախ վա-
րակվում են ամենայերիտասարդ հասակի
մարդիկ 20 — 35 տարեկանները: Յեթե
զրան ավելացնենք, վոր վորովայնի տիֆով
ամեն մի 100 հիվանդացմբից մենում են
10 — 12 մարդ, իսկ աերբեմն ավելի շատ,
ապա հասկանալի կդառնա, թե ինչքան
լուրջ ե այդ հիվանդությունը և ինչպիսի
վտանգներ ե բերում նա:

Դիզենտերիան նույնպես շատ ծանր հի-
վանդություն ե: Դիզենտերիայի միկրոբ-
ներն որգանիզմը թունավորում են ուժեղ
թուներով (տոկոֆիններ), վորոնք նրանք
արտադրում են: Դիզենտերային տոկոֆին-
ներով թունավորվելը շատ ուժեղ կերպով
և անդրադառնում ներվային համակարգու-
թյան և սրտի վրա: Սակայ չեն զեպքեր,
յերբ զիզենաերիայով հիվանդը մահանում է
սրափ թուլությունից:

Դիզենտերիայի ժամանակ վնասվում են
զլխավորապես հաստ աղիքները: Նրանցում
զոյանում են խոշոր, իրար հետ միացվող բո-

ցեր, վարոնք, ինչպես և փորովայնի տիֆի
ժամանակ, կարող են առաջացնել աղիքի
պատում կամ արյունահոսություն:

Դիզենտերիան սկսվելիս առաջանում է
այլարկոտություն, ախորժակի ռացակալու-
թյուն, ցավեր փորում կրծքագղալի տակ,
յերբեմն փխոսումներ և թեթև սարսուռ:
Զերմաստիճանը լինում է հաճախ վոչ բարձր:
Հիվանդի զրությունը վատանում է: Աչքերը
խորն են ընկնում, յերեսը՝ զունատվում,
զեղուն՝ փառակալում: Դուրս և զնում հաճա-
խակի, ըստ փորում կղկղանքին խառ
նվում ե ավելի ու ավելի շատ լորձունք և
արյուն:

Ինչքան հաճախ և դուրս զնում հիվանդը,
այնքան ավելի տանջալից են դառնում ցա-
վերը հետանցքում: Դուրս զնալու թիվն որվա-
մեջ կարող և հասնել 50 — 60-ի և ավելի:
Այդպիսի ծանր զրությունը տեսում ե 7 —
10 որ, իսկ յերբեմն ել՝ ավելի: Դիզենտե-
րիայով յուրաքանչյուր 100 հիվանդացողից

մեռնում են 12 — 17 մարդ, իսկ ծանր հա-
ժամարակների ժամանակ՝ ել ավելի:

ԵԿՇՊԵՍ ԵՆ ՎԱՐՍԿՎՈՒՄ
ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԵՇՈՎ ՅԵՎ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅՈՎ,

Սովորաբար վարակի աղբյուր են հան-
գիսանում հիվանդները կամ այսպես կոչ-
ված՝ բացիւակիբները:

Բանն այն է, որ փորովայնի տիֆից և
դիզենտերիալից ասողջանալուց հետո այդ
հիվանդությունների միկրոբները միանդա-
մից չեն անհետանում որպանիզմից: Նրանք
կարող են զեռ յերկար ժամանակ (մի-
քանի ամսոց մինչև միքանի տարի) հիվան-
դացաների կղկղանքի և մեզի հետ արտա-
թորքել: Այդպիսի մարդիկ, փորոնք իրենք ա-
ռողջ են, բայց որպանիզմում վարակիչ հի-
վանդության միկրոբներ են կրում և շրջա-
պատող միջավարում արտաթորում՝ կոչ-
վում են բացիւակիբներ:

Բացիւակիբները հատկապես վտանգավոր
են շրջապատի համար: Զգիտենալով, վոր

տպալ մարզը բացիլակիր ե և վոր նա կա-
րող ե վարակ տարածել, մենք նախազգու-
շական միջոցներ ձեռք չենք առնում, ինչպես
այդ անում ենք վարակիչ հիվանդի նկատ-
մամբ, և հեշտությամբ կարող ենք վարակ-
վել:

Վորովայնի տիֆով կամ գեղենտերիալով
հիվանդացած ամեն մի 100 մարդուց 5-ն
առողջանալուց հետո զեռ յերկար ժամանակ
մնում են վարպես բացիլակիրներ:

Վորովայնի տիֆի և դիղենտերիալի միկ-
րոբները հսկայական քանակությամբ լի-
նում են հիվանդների և բացիլակիրների
փորոտիքում և արտաթորփում են նրանց
կղկղանքի, իսկ վորովայնատիֆի ժամա-
նակ նաև մեզի հետ: Հեշտ ե հասկանալ,
վոր հիվանդներին խնամող անձինք կա-
րող են կեղտութած ձեռքերով միկրոբները
բերանը տանել և վարակվել, Հենց կեղտու-
գած ձեռքերով ել սնունդ պատրաստելիս
կարող են վարակվել նաև ընտանիքի մյուս և
անդամներին արվող մթերքները:

Սննդամթերքների վարակման մեջ մեծ
գեր են խաղում հիվանդների ու բացիլա-
կիրների կղկղանքով ու մեզով կեղտուաված
զոմերի բակերից կամ արտաքնօցներից
բնակելի շենքերը թուած ճանձերը, Կարող ե
վարակված լինել նաև բանջարանոցների
բանջարեղենը, վորովինետև մարզերը պարար-
տացվում են զոմազբավ, և ջրվում են թըր-
քաջրով, իսկ զոմազրին կարող են խառ-
նըգած լինել վարակված մարդու թափուկ-
ներ (կղկղանք, մեզ):

Վորովայնի տիֆի և դիղենտերիալի տա-
րածման մեջ հատկապես մեծ զեր են խա-
ղում կաթն ու ջուրը:

Վերելքում արդեն ասացինք, վոր կաթը
միկրոբների սնման համար հրաշալի միջա-
վար, ե, զրա համար ել հատկապես կաթի
մեջ միկրոբները լավ են բաղմանում. Կաթը
կարող ե վարակվել և կթողի և կաթնավա-
ճառի ձեռքերից, ամանից, ջրից, վորով լը-
գացվում են կաթի ամանները Բացի զրա-
նից, հնարավոր ե, վոր մասնավոր կաթնավա-

ճառները կաթը ջրիկացնելիս վարակ-
ված չուր խառնեն նրան:

Այն ջուրը, վարի մեջ միկրոբները յեր-
կար ժամանակ ապրում են, շատ հաճախ
վորովանի տիֆի և զիղենտերիայի մաս-
սաւական հիվանդացումների պատճառ է
զանոնում: Վաստ կառուցված ջրհորները,
յեթե նրանք մոտ են արտաքնոցներին,
վարակվում են ջրհորի մեջ հոսող հեղուկ-
ներից: Նույնիսկ լավ կառուցված ջրհորը
կարող ե վարակվել, յեթե նա ընդհանուր
գույլ չունի և ամեն վոք նրա մեջ ե իջեց-
նում իր՝ հաճախ կեղտուտ գույլը:

Եետերի և բաց ջրամբարների ջրերը, վա-
րոնցով ողտվում են խմելու և լողանալու
համար, կարող ե վարակվել բացիւակիրնե-
րի կողմից, զոմերի բակերից և արտաքնոց-
ներից հոսող ջրերով, կամ յեթե այդ ջրում
վարակված սպիտակեղեն են լվանում: Այդ
կապակցութամբ պրոֆ. Ռողենքերդը «Ին-
ֆեկցիոն հիվանդություններ» գրքում բե-
րում է հետեւյալ գեպքը.

Ճապնական մարդերից մեկի մի փոքրիկ
գետակում լվանում են զիղենտերիայով հի-
վանդների կեղտուումած սպիտակեղենը: Այդ
տեղին հարեվան, նույն գետի ափին ըն-
կած գլուզի բնակիչները, տոնի կապակ-
ցությամբ սարքում են լողի վարժություն-
ներ և ձկնորսություն: Չորս որ ոնց՝ գլուզ-
ի բնակիչներից 413 մարդ հիվանդանում
են զիղենտերիայով:

Ահա թե ինչու հատկապես ամառային
ամիսները, յերբ ջուրը բանջարեղեն և հում
կամ շմաքը ված մրգեր շատ են գործածվում
յերբ մեծ քանակությամբ ճանճեր են յերե-
գում, վորովանի տիֆի և զիղենտերիայի
համաճարակների զարգացման համար առ-
մենից բարենպատ ասիսներն են:

ԱՆՇՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՇՑՊԱՆՎԵԼ
ՎՈՐՈՎԱՅՆԻ ՏԻԹՈՎ ՅԵՎ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅՑՈՎ ՎՈՐԱԿԱՎԵԼՈՒՅ

Հարց ե ծագում, թե ինչպես պետք ե
խուսափել վորովայնի տիֆով և դիղենատե-
րիայով վարակվելուց, քանի զոր արդ հի-
վանդություն ններն առաջացնող միկրոբներն
անտեսանելի յեն, նրանք կարող են դժուվել
ջրում և անդամթերբների մեջ, քանի զոր
վարակը տարածում են վոչ միան հիվանդ-
ները, այլ և առողջ մարդիկ (բացի լա-
կիրները):

Վարակվելուց խուսափել կարելի յեն

Քանի վոր վարակի առենից հաճախ և
վտանգավոր աղբյուր ե հանդիսանում վա-
րակիչ հիվանդը, ապա նախ և առաջ վո-
ռվակայնի տիֆով կամ դիղենատերիայով հի-
վանդին անհրաժեշտ ե ուղարկել հիվան-
դանոց:

Դրանից հետո անհրաժեշտ ե դիղենֆեկ-
ցիայի յենթարկել այն շենքը, զորոեղ հի-
վանդն և պառկել և ախտահանել այն իրերը.

Վորոնց հետ հիվանդն այս կամ այն կերպ
չփոխել ե:

Շատ կարենոր ե դիղենֆեկցիայի յենթարկել
այն արտաքնոցը, վորից ստղվել ե հիվանդը
կամ ուր լցրել են նրա կղկղանքն ու մեղքը:

Այս միջոցառումները շրջապատողներին
կազատեն վարակի հետաղա տարածումից:

Խորհրդային իշխանությունը հսկայական
աշխատանք ե կատարում բնակչությանը
վարակիչ հիվանդություններից պաշտպա-
նելու համար: Ջրմուղների կառուցումը
(յերբ ջուրը արվում ե սպառման համար
հատուկ աղբուրներից անվտանգացրած
ջրությամբ), կուռուղիների կառուցումը (իերո-
կեղառոտությունը խողովակների միջոցով
հեռացվում ե բնակավայրերի սահմաննե-
րից), բնակավայրերի թափուկների ու աղրի-
մաքրումը, հասարակական օննդի բարելա-
վումը, հիվանդանոցային և բուժաբանային
ցանցի հսկայական գարգացումը և այլն, այս
բոլորը խիստ կերպով նվազեցնում են ստա-
մոքսա—աղիբային հիվանդությունները:

Մեր նվաճումներն առողջապահության
բնադավառում ակնբախ են: Յեթե իմ-
պերիա խստական պատերազմից առաջ յու-
րաքանչյուր 10.000 բնակչից մուսաստա-
նում վորովայնի տիֆով տարեկան հիվան-
դանում ելին 30 մարդ, ապա արդեն 1928 թ-
վ ԱՀՄ-ում 10.000 բնակչությանն ընկնում
եր 6 հիվանդ տարեկան: Բայց հիվանդա-
ցումներ ելի կան: Պետք ե լրիվ վերացնել
այն:

Շատ բան պետք ե և կարող են անել
իրենք՝ աշխատավորները, Կոլանտեսու-
թյուններում և խորհնանակություններում
լավ, կափարիչներով և հասարակական
գույլերով ջրհոսներ կառուցելը, բնակարանն
ու բակը մաքուր պահելը, ճիշտ կահավոր-
ված արտաքնօցներ կառուցելը, աղբի հա-
մար փակ արկղներ ունենալը, ճիշտ կա-
ռուցված աղբանոցներին բնակավայրի սահ-
մաններից զուրս տեղ հատկացնելը—այս բա-
լորը հենց իր՝ բնակչության գործն եւ

Առողջապահության ակտիվը, կոլանտե-

տալին և խորհնանակային վողջ հասարա-
կանության հետ միասին, առողջապահու-
թյան որգաններին մեծ ողնություն պիտք ե-
նացնեն վարովայնի տիֆի և դիկենանոերիցի
զեմ պարարելու գործում նաև այն ժամա-
նակ, յերբ այդ հիվանդության առանձին
գեղքերն արգեն յերեվացել են այս կամ
այն վայրում:

Կարող են պատահել նաև այնպիսի դեպ-
քեր, յերբ առանձին անհատներ ծածկում են
իր կամ իրենց մերձավորների հիվանդու-
թյունները, չցանկանալով հիվանդին հի-
վանդանոց տեղափոխել: Նման յերեվույթի
զեմ պետք ե պարարի ամենից առաջ
առողջապահության ակտիվը:

Ինչքան շուտ հայտաբերվեն վարակիչ
հիվանդները, ինչքան շուտ նրանց տեղա-
փոխեն հիվանդանոց, ինչքան շուտ կատար-
վի այն շենքի ախտահանումը (դիկենքեկ-
ցիա) գորտեղ յեղել ե հիվանդը, այնուան-
քիչ կլինի վարակի տարածման հնարավո-
րությունը:

Առողջապահության սեկցիաների անդամունքները ու հասարակական սանիտարական լիազորները միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի, վորբան կարելի է, շուտ հայտնեն մոտակա բժշկայանին կամ հիվանդանոցին վորովայնի տիգի և դիզենտերիալի առաջին խոկ կատկածելի դեպքի մասին։ Առողջապահության հասարակական աշխատավորները բնակչությանը պետք են բացատրեն այն վտանգը, վոր ներկաւացնում են իրենցից շրջապատի համար տանը մնացող վարակիչ հիվանդները։

Հասարակայնությունը պարտավոր են ոժանդակել հիվանդացածին շուտափույթ կերպով հիվանդանոց ուղարկելու մամանակին փոխադրական միջոցներ գտնելու և այլնի համար։

Անհրաժեշտ են բժշկական պերսոնալին ամեն կերպ ողնել ախտահաճնելու այն տըները, վորտեղից դուրս են տարկել հիվանդները։

Հսկայական նշանակություն ունի անձ-

նական առողջաբանության (գիդիենայիր) կանոնների կատարումը, Հարկավոր են ձեռքերը հաճախ լվանալով (հատկապես ուտելուց առաջ և արտաքնոց գնալուց հետո), մննդամթերքները պաշտպանել կեղծառավելուց ու ճանձերից, ջուրն ու կաթը գործածել միայն յեռացրած, գաշտային աշխատանքների վայրը հասցնել թարմ, լավորակ խմելու ջուր (ամենից լավ են յեռացրած), հում բանջարեղենն ու սիրզը խըր նամքով լվանալ յեռացրած ջրով։

Պետք են հիշել նաև, վոր մանկական լուծերը, վորոնց վրա հաճախ ուշադրություն չեն դարձնում (վորովհետեւ համարում են վոչ վարակիչ), հաճախ դիզենտերային կամ տիգով հիվանդացումներ են լինում։ Ուստի, նման դեպքերն յերեալիս, անհրաժեշտ են ձեռք առնել նույնպիսի նախազգուշական միջոցառումներ, ինչպիսին ձեռք և առնվում դիզենտերիալի կամ վորովայնի տիգի ժամանակ։

Այդ նշանակում են, վոր յերբ այդպիսի

հիվանդության կասկած կա, հիվանդները
մինչև հիվանդանոց տանելլը պետք ե ա-
ռանձնացվեն շրջապատից: Ամենալավն այն
ե, վոր հիվանդն առանձին սենյակում տե-
ղափորիլի: Համենայն գեպս հիվանդը պետք
ե ստանա առանձին անկողին, աման, սրբիչ
և այլն: Նրան պետք ե խնամի մեկ անձ: Ան-
հրաժեշտ ե հիվանդի ամանները լվանալ
առողջերի ամանեղենից առանձին, յեռա-
ցող ջրով և սողայով: Հիվանդի սպիտա-
կեղենը հարկավոր ե լվանալ առանձին և
անպայման յեռացնել:

Հիվանդի զիշերային պետքանոթները,
տրտաքնոցները, անհրաժեշտ և ամեն որ
ախտահանել քորակիրի կամ այլ ախտա-
հանիչ լուծութով, վորը խորհուրդ կտա
քժիշկը:

Նշված միջոցառումները հազարավոր
մարդկանց կպաշտպանեն վորովայնի տիֆուզ
և դիգենտերիայով վարակվելու հնարավո-
րությունից:

Բայց կա վորովայնի տիֆի ու դիգենտե-

քիայի զեմ պայքարելու մի հզոր միջոց եւ,
վորը կարող ե պահպանել մարդուն հիվան-
դանալուց նույնիսկ այն դեպքում, յերբ
այդ հիվանդությունների միկրոբներն ընկել
են մարդու որդանիզմի մեջ, այսինքն, յերբ
նույնիսկ տեղի յեւ ունեցել վարակումը: Այդ
միջոցն ե հակավոր պայնատիֆային և հակա-
զիպենտերային պատվաստումը.

ԵԽԶ ԸՆ ՏՄ.ԼԻՍ ՊԱՏՎՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Վարակիչ հիվանդություններից մեծ մա-
սով մարդ իր կյանքում հիվանդանում ե
մեկ անդամ: Յեթե նույնիսկ միմնույն հի-
վանդությամբ յերկրորդ անդամ հիվանդա-
նալու զեպքեր են լինում, ապա նախ՝ այդ
զեպքերը շատ հաղվադեպ են և յերկրորդ
կրկնության զեպքում հիվանդության ըն-
թացքն անհամեմատ թեթև և քան առաջին
անդամ:

Այդ փաստը հայտնի յե վոչ միայն ժամա-
նակակից մարդկանց, այլ և այդ մասին զի-
տելին զեռ շատ հին ժամանակներում: Յեզ

արդեն վաղուց փորձեր եյին արվում մար-
զուն և պատվասաելք հիվանդության թիթե
ձեռվ, վորսեսզի հետո ծանր չհիվանդանաւ

Պատվաստումներն առաջին անգամ զի-
տականորեն հիմնալորեց անզլիացի բժիշկ
Զենները, վորն ապրում էր ավելի քան
150 տարի սրանից առաջ: Նա զիտեր, վոր
կովերն ունեն մի հիվանդություն, վոր հի-
շեցնում ե մարդկային ծաղիկ հիվանդու-
թյունը: Յերբ կովկիթները ծաղիկ հիվանդու-
թյան այդ ձեռվ կովերից վարակվում
եյին, ապա նրանք հիվանդանում եցին շատ
թեթև. ծաղիկի բշտիկները սովորաբար յերե-
վում եյին միայն մատների վրա: Այդպիսի
ծաղկով հիվանդացողները հետո այլևս չե-
յին հիվանդանում մարդկային ծաղկով-զար-
հուրելի մի հիվանդություն, վորից այն ծա-
մանակներում բնաշինջ եյին լինում ամրող
զյուղեր ու քաղաքներ:

Զենները մարդկանց բնական ծաղկից
պաշտպանելու համար սկսեց պատվաստել
կովի անվտանգ ծաղիկը,

Շնորհիվ այդ հայտնաբերման, բոլոր յեր-
կրներում, վորտեղ հիմա անց ե կացված
պարտազիք ծաղկահատում, վոչ միայն բո-
լորովին վերջացել են ծաղկի համաճարակ-
ները, այլև այդ հիվանդության առանձին
ել դեպքերը սակավ են դարձել:

Մյուս վարակիչ հիվանդությունների վեմ
պատվաստման հարցը մշակեց ֆրանսիական
զիտնական լուի Պատերը: Պարզվեց,
վոր մարդկային որդա՝ իդմի մեջ թուլաց-
րած կամ սպանած միկրոբներ մտցնելը հե-
տագայում պաշտպանում ե նրան հիվան-
դանալուց՝ նույնպիսի բայց չթուլացը ած
միկրոբներով վարակվել ա:

Ապա պարզվեց, վոր յերբ վարակիչ հի-
վանդության միկրոբներն ընկնում են ոբ-
զանիդմի մեջ, արյան մեջ սկսվում են ար-
տադրվել հատուկ նյութեր (հակամարմին-
ներ), վորոնք այդ միկրոբների վրա մնա-
սակար ներգործություն են ունենում, նույ-
նիսկ վոչ նշացնում են նրանց: Յերբ մարդու
արգեն առողջանում ե և նրա որգանիզմու

աղասիում և միկրոբներից, այդ նյութերը
պես յերկար ժամանակ մնում են արյան մեջ։
Յեվ յեթե յերբեք նույն այդ հիվանդության
միկրոբները նորից ընկնեն այդ մարդու
սրբանիզմի մեջ, առա նա այլևս չի հիվան-
դանա, վորովհետեւ նրա արյան մեջ կան
նախորոք պատրաստված հակամարմիններ
— հակաթույներ, վորոնք որդանիզմի մեջ
ընկած միկրոբներին վոչչացնում են և չեն
թույլ տալիս, վոր հիվանդությունը զար-
գանա:

Արյան մեջ վարակիչ հիվանդությունից
պահպանող նյութերի առկայությունը
մարդու մեջ առաջացնում և անզգայունա-
կություն կամ իմմունիտետ, այդ վարակիչ
հիվանդության նկատմամբ։

Յերբ այս կամ այն վարակիչ հիվանդու-
թյան դեմ պատվաստում ենք, զրանով մենք
մարդու (կամ կենդանու) մեջ արհեստակա-
նորեն առաջացնում ենք նման անզգայու-
նակություն, Բժիշկները զրան արհեստա-
կան իմմունիտետ են անվանում։

Պատվաստումներ կատարելիս մենք ոք-
դանիզմն ենք մտցնում սպանված կամ թու-
լացրած միկրոբներ, վորոնք չեն կարող հի-
վանդություն առաջացնել։ Հենց վոր այդ
միկրոբներն ընկնում են որդանիզմի մեջ,
անմիջապես արյան մեջ սկսվում են արտա-
զրել ալյալ վարակիչ հիվանդությունից
պաշտպանող նյութեր և այդ հիվանդության
նկատմամբ անզգայունակություն և տուչ-
զալիս այնպես, ինչպես այդ տեղի կունենալը
ցերե մարդոր իրականում հիվանդանար տվյալ
հիվանդությամբ։ Առա որգանիզմի այդ կա-
րեռագույն հատկությամբ ել ոգտվում են
ներկայաւում հակավորովայնատիփային և
հակագիզենտերային պատվաստումներ կա-
տարելիս։

Այդ հիվանդությունների միկրոբներին
տաքացնելով կամ վորեւ այլ յեղանակով
սպանում են և արհեստական իմմունիտետ
առաջացնելու նպատակով մտցնում որգա-
նիզմի մեջ։ Այն նյութը, վորով պատվաս-
տում են կատարում և վոր բաղկացած ե-

անվտանգացրած միկրոբներից, կոչվում ե
վակ կ ցին ա: Վակցինան և կարելի յե զոր-
ծածել հեղուկ զրությամբ (որինակ՝ հակա-
վորովանատիփային վակցինան), կամ չորա-
ցած զրությամբ տարետկաներով (որինակ՝
հակաղիկենտերային վակցինան):

ԻՆՉ ՈԴՈՒՏ ԵՆ ՏՍԼԻՄ ՎՈՐՈՎԹՅԱՆԻ
ՏԻՔԻ ՅԵՎ ԴԻԶԵՆՏԵՐԻԱԼՅԻ Ի ԵՄ
ԿՈՏՈՐՎՈՂ ՊՈՑԿՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Վորովայնի տիֆի և դիղենտերիայի զեմ
պատվաստումները հայտնի յեն բավական
յերկար ժամանակ: Դեռ անցյալ դարի վեր-
ջերին (քառասուն տարի առաջ) անդիմացի
Ռայտը Հնդկաստանում գտնվող անդիմական
քորքերի մեջ կիրառեց հակավորովայնատի-
փարին պատվաստումներ:

Արդյունքներն այնքան լավ յեղան, վոր
այդ պատվաստումներն սկսեցին կիրառել
նաև մյուս յերկրների բանակներում,
Քանի վոր բանակներում պատվաստում-

ները կատարվում են մասսայականորեն և
վողջ անձնակազմի համար պարտադիր կար-
գով, ուստի, նրանց ներգործման ցուցանիշ-
ներն ամենացայտունն ու համոզեցուցիչը
կինեն:

Անցյալներում բոլոր յերկրի բանակները
մարդկային ամենաշատ կորուստն ունե-
նում եյին վոչ թե զենքից. ալ հիվանդու-
թյուններից: Որինակ, 1855 թվականի
Ղըմի պատերազմում Փրանսիական 300
հազարանոց բաւակը հիվանդություններից
կորցրեց 75 հազար մարդ, իսկ հակառա-
կորդի կրակից՝ միայն 20 հազար: Անզիմա-
կան բանակն ամեն մի հազար զինվորից
կորցնում եր՝ զենքից 47 մարդ, իսկ հի-
վանդություններից՝ 176 մարդ: Այդ հակա-
թվերի մեջ վորովայնի տիֆը դրավում եր
առաջին աեղերից մեկը: Պարտադիր պատ-
վաստումների կիրառումը խիստ փոխեց այդ
հարաբերությունը:

1914 — 1915 թ. թ. Փրանսիական բա-
նակն ամեն ամիս վորովայնի տիֆից կորց-

նում եր 12 հազար մարդ, իսկ 1918 թ. յեր մտցվեցին պատվաստումները, վորովայնի տիֆով հիվանդանում ելին ամսական միջին թվով 18 մարդ, առավիսով հիվանդացումը նվազեց ավելի քան 660 անգամ»

Պատվաստումների ներզործությունն ըստուգելու համար զորքի մի մասին պատվաստում ելին վորովանատիֆի դեմ, իսկ մյուս մասը թողնում ելին առանց պատվաստումի: Պարզվեց, վոր, որինակ. Ավելիոն քաղաքի (Ֆրանսիա) կայազորում 1919 թ.ին պատվաստվածներից վորովայնի տիֆով վոչ վոք չիվանդացավ, իսկ չպատվաստվածներից հիվա զայան 22-ր հոգի՝ ամեն մի 1000 դինվորից, Յեր 1913 թ. պատվաստումներով բնդզրկվեց ամբողջ կայազորը, հիվանդացումը զինվորների մեջ բոլորովին գաղարեց:

Վորովայնի տիֆի դեմ կատարած նախազուշական պատվաստումների բարենպատառ զգեցույունը և հիվանդացումների նվազումն առանձնապես ցայտուն կերպով ցույց

են տալիս հետեւյալ տվյալները Կարմիք բանակում:

1919 թ. մեր մարտիկների ամեն մի հազար հոգուց վորովայնի տիֆով հիվանդացումների թիվը հասնում եր մինչև 11 հազոր, Բայց պատվաստումով ել ընդզրկվում եր ամբողջ անձնակազմի հազիվ յերբորդ մասը, Հետզհետե, ինչքան մհծանում եր բանակի անձնական կազմի բնդզրկումը պատվաստումներով, անքան նվազում եր հիվանդացումը Հետագայում, յեր սկսեցին 1000 մարդուց պատվաստման յենթարկել 999-ը, վորովայնի տիֆով հիվանդացումը համարյա բոլորովին դադարեց (1927 թվին անձնակազմի 2000 մարդուն ընկնում եր մեկ դեպք), Պետք ե ավելացնել, վոր կարմիր բանակում 1927 թվին վորովայնի տիֆից մահացությունը պակասեց 22 անգամ 1920 թվի համեմատությամբ:

Նման ալգուններ են տալիս և հակագիզերային պատվաստումները:

Բերված թվերն այնքան ցայտուն են ու
համոզիչ, վոր չեն կարող կասկած թողնել
այն բացառիկ նշանակության հանդեպ, վոր
ունեն պատվաստումները՝ վորովայնի տիֆն
ու դիգենտերիան կանխելու դործում:

ԻՆՉՊԵՍ ԵՇ ԿԱՏԱՐՈՒՄ
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՎՈՐՈՎԱՅՆԵՐ
ԵՅՑ ՅԵՎ ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅՆ ԴԵՄ

Վակցինան որդանիզմի մեջ մտցնելու
յեղանակը տարրեր պատվաստումների ժա-
մանակ տարրեր եւ:

Հակավորովայնատիփային պատվաստում-
ների ժամանակ վակցինան սրսկիչի (շարիցի)
միջոցով, մտցվում եւ մաշկի տակ, ամենից
հաճախ մեջքի վրա, յերկու թիակի մեջ-
տեղը. Վակցինան մի անգամ մացնելը բա-
վական չե: Որդանիզմում վորովայնի տիֆի
գեմ անգայունակություն առաջացնելու
համար անքանէ եւ ամեն մի սրսկան
մեջ 7 — 14 որ ընդմիջումով յերեք անգամ
պատվաստում կատարել:

Հակաղիզենտերային պատվաստումներ
կատարելիս վակցինան որդանիզմի մեջ են
մտցնում թերանի միջոցով՝ չոր (փորպես տար-
լետկաներ) կամ հեղուկ գրությամբ թերեք
որ անընդհատ, առավաներո քաղցած փո-
րին (ուտելուց մեկ ժամ առաջ և վերային
ուտելուց 4 — 6 ժամից վոչ շուտ) ամեն մի
պատվաստվող, պատվաստումը կատարած
հատուկ բուժաշխատողի ներկայությամբ
պետք եւ կուլ տա մեկական տարլետկա,
կամ խմի համապատասխան քանակու-
թյամբ հեղուկ վակցինա: Այդ վակցինան
յերեք անգամ ընդունելուց հետո պատ-
վաստը վերջացած եւ:

Վակցինան պետք եւ խմել միմիայն յեռաց-
րած ջրով:

Հակաղիզենտերային պատվաստումները
միանգամաւանդ անվանութ են վոչ միան մե-
ծերի, այլև յերեխաների համար: Վերջի նաև-
րին տրվում եւ վակցինայի համապատաս-
խան վորը քանակություն, քան մեծերին:

Պատվաստվածի արյան մեջ նախապաշտ-

պահանջան նյութերն անմիջապես աբտագլուի չեն կարող: Անզգայունակությունը վրա յե հասնում միայն վերջին սրսկումից կամ հակադիզենտերային պատվաստումների ժամանակ վակցինան բերանի միջոցով, իերուրդ անդամ ըստունելուց 3—4 շաբաթ հետո:

Կարող են լինել այնպիսի դեպքեր, յերբ մարզը վարակվում ե պատվաստումներից անմիջապես հետո այն շրջանում, յերբ անզգայունակությունը զեռ չի դոյացել: Այդ դեպքում պատվաստումն, ինարկե, չի կարող պաշտպանել հիգինդությունից:

Տարվա վճր յեղանակն ե տաենից լավ փորովանի տիֆի և զիգենտերիայի զեմ պատվաստումները կատարելու համար:

Այս հարցին պատասխանելն այնքան ել դժվար չե: Յեթե հիշենք, վոր այս հիգինդությունները ատրածգում են հատկապես ամսուային ամիսներին (մոտավորապես հունիս-հուլիս), ապա սատվաստումները պետք ե վերջացնել այն հաշվով, վորպեսզի

այդ ժամանակ արդեն որգանիզմում առաջ ջացած լինի անզգայունակությունը: Յեկ վորովնետես պատվաստի համար (վորովնատիթիք ժամանակ) հարկավոր ե յերեք շաբաթից վոչ պակաս, իսկ իմմունիտես զոյանալու համար մոտավորապես ամիս, գուրս և գալիս, վոր ամենից լավը և պատվաստումներս սկսել մարդուն կամ ապրիլի սկզբներին: Հակադիզենտերային պատվաստումներն անում են և մայիսին:

Ինչքան ուշ ե կատարվում պատվաստումը, այնքան մեծ քանակությամբ մարդկեկ են յենթարկվում վարակվելու և հիգինդություններին: Այդ պետք ե հիշել և պատվաստումները չետաձգել:

Ի հարկե, յեթե այս կամ այն կետում վորովայնի տիֆի կամ դիղենտերիա, ի մասնայական դեպքեր են յերեսում, իսկ բնակչությունն առաջուց պատվաստված չի յեղել, ապա պատվաստումներն անմիջապես պետք ե սկսել, թեկուղ յերբ ել վոր սկսվի այդ բռնկումը: Այս միջոցառումը միշտ ել

ՖԻԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ մարդկանց փրկում և
հիվանդանալուց:

ՊԱՏԳԱՍՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԱՐԴՅՈՒՔ
ԵԵՐԿԱՐ Ժ.Ա.Մ.Յ.Ն.Ա. Ե Մ'ՆՈՒՄ
Ա.Ն.ԶԳ.Ա.ՅՈՒ.Ն.Ա.ՆՈՒԹՅՈՒՆՆԵ
ՎՈՐՈՎ.Ա.Յ.Ն.ՏԻՒԽ Կ.Ա.Մ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱԼԻ ՆԿԱՏՄԱՄ

Պատվաստումից հետո իմմունիտետը զորվայնի տիֆի նշանամբ մնում է 10—12 ամիս գիգենիալիքի նկատմամբ, զրանից ել պակաս: Այդ ժամանակաշրջանն անցնելուց հետո ամեն մեկը կարող է վարակվել և հիվանդանալ ինչպես և շպատվաստվածը: Ահա թե ինչու այդ հիվանդությունների գեմ կատարվող պատվաստումներն ամեն տարի պետք է կրկնել: Յե, կրորդ տարին մարդուն վորովայնատիփային կրկնապատվաստ կատարելիս 3 սրոկան փոխարեն բավական և արդեն 2 սրոկում, իսկ յերբորդ և հետագա տարիներին՝ (յեթե նախորդ յեր-

կու տարում կատարված են յեղել լիա-
կատար պատվաստումներ) զակցինան կա-
րելի է սրսկել սիան մեկ անգամ:

Բայց զրա համար, կրկնում ենք, հար-
կավոր ե վատան լինել, վոր տվյալ անձն,
իրապես, յերկու տարի իրար հետեւից պատ-
վաստված և յեղել և պատվաստումները յեղել
են ճիշտ կատարված:

ՊԵՏՔ Ե ԱՐԴՅՈՒՔ Վ.Ա.ԽԵՆՍՈՒՆ
ՊԱՏԳԱՍՏՈՒՄԻՆԵՐԻՑ, Վ.ՅԱ.Վ.Ա.ՎՈՐ
ԵՎ ԱՐԴՅՈՒՔ ՆՐԱՆՔ

Շատ հաճախ ասում են, թե պատվաստից
կարելի է հիվանդանալ այն հիվանդու-
թյամբ, վորի գեմ կատարվել և պատվաստը

Դա, իշարելե, միանդամայն սիալ և, քա-
նի վոր պատվաստումները կատարվում են
սպանված, արդեն անվտանգացված միկ-
րոբներով: Յերբեմն կարող ե պատահել,
վոր պատվաստումը կատարվի արդեն
վարակված, հրանդության ծածկաշրջանում
գտնվող մարդուն, կամ վարակումը կարող

ե տեղի ունենալ պատվաստումը կատարելուց առ միջապես հետո, յերբ դեռ իմմունիտետ չի գուացել: Նման զեպքում պատվաստածն, ինարկե, կարող ե հիվանդանալ: Բայց այսուեղ արդեն պատվաստումը բոլորովին մեղագոր չե:

Թեպետ շատ սակավ, բայց լինում ե և այնպես, վոր ուժասպառ յեղ ած որդանիզմում իմմունիտետ չի գոյանում շնայած ճիշտ կատարած պատվաստին: Այդպիսի մարդիկ նույնպես կարող են հիվանդանալ, բայց նրանց հիվանդությունն ընթանում ե անհամեմատ թեթե, քան բոլորովին շապատվաստվածներինը:

Պրոֆեսոր Ռոզենբերգը հատկապես ուսումնասիրել ե, թե ինպես ե ընթանում վորովայնի տիֆր, յերր նրանով հիվանդանում են պատվաստվածները: Պարզվել ե, վոր նման 100 զեպքից խիստ ծանր հիվանդանում ե միայն մեկ մարդ, յերեք հոգի հիվանդանում ձև ծանր, իսկ մնացած 96-ը

հիվանդությունը տանում են հեշտ և առաջնում են շոււա:

Մահացության գեպքեր պատվաստվածների մեջ սովորաբար չի նկատվում, մինչդեռ 100 չպատվաստված հիվանդից մահանում են 10 — 12 հոգի: Այս տվյալները մենք քերում ենք, վորպեսզի ցույց տանք, թե պատվաստվածների մեջ յեղած հաղվազեպ հիվանդացու մները վոչ մի կերպ չեն կարող արատավորել պատվաստումների բարենպաստ հսկայական նշանակությունը: Յեվ միայն այս հարցում զուխ չէանող մարդիկ կարող են այլ յեզրակացություններ անել:

Հաճախ պատվաստումից խուսափում են վախենալով, թե սրսկած աեղը ցավ կպատճառի: Բայց դա շատ թեթևամիտ պատճառ ե, վորպեսզի նրա վրա յերկար կանգ տռնենք.

Պատվաստումները կատարում են բարակ ասեղով և սրսկումն ինքնբարինքյան շատ չնշին ցավ ե պատճառում:

Լինում են զեպքեր, յերբ պատվաստումից հետո (հաճախ հետեւյալը որը) սրսկած տեղն

սկսում ե ցավել, նրա շու րջը կարող ե կտրմը
քություն առաջանալ, նույնիսկ վորոշ չա-
փով բարձրանում ե ջերմաստիճանը, պատ-
վաստվածի գուշին սկսում ե ցավել և մար-
մինը կոտրտվել, իսկ հակադիզենտերային
պատվաստի ժամանակ կարող ե սկսվել
թե թե փորհարինք:

Բայց և այնպես, աս բոլոր յերեսույթնե-
րը միանգամայն անվտանգ են և շատ-շատ
մի քանի ժամից հետո վերանում են ան-հետ-
իսկ ճնշող մեծամասնությամբ սրսկումներն
ընթանում են սրսկվողի համար առանց
վորեւ անախորժ զգացու մների,

Գատվաստումներին վորեւ հատուկ պատ-
րաստություն չի պահանջվում: Հարկա-
վոր ե միաւն հիշել վոր հակադիզենտե-
րային պատվաստումները կատարվում են
քաղցած փորին և տարետկան ընդունելուց
հետո յերկու ժամ վոչինչ ուտել չի կարելի:

ԳԱՅԱԿԱՍՏՈՒՄՆԵՐՆ ՈՒՄ ԵՆ ԱՆՌԵՎ

Պատվաստումներն առաջին հերթին պետք
ե անցկացնել այնտեղ, վորտեղ աղիքալին
հիգանդությունների զարգացման և տարած-
ման համար պայմաններն ամենից բարե-
նպատ են: Սրանց թիվն են զասկում ա-
մենից առաջ հանրակացարանները, վորտեղ
ժարդիկ հատկապես մոտ շփման մեջ են
մեկը մյուսի հետ:

Ֆարբիկանների և գործարանների բանվոր-
ները, խորհուտապությունների բանվորները,
պարենամթերքների խանութների և հա-
սարակական սննդի ձեռնարկությունների
բոլոր աշխատակիցները, սեղոնային բան-
վորները, դաշտակայաններում ապրող կոլ-
ոնտեսականները, առաջին հերթին պետք ե
պարտադիր կարգով յենթարկեն պատվաս-
տումների.

Ապա պատվաստումները ժամանակին
պետք ե կազմակերպվեն այն կետերում՝

վսրոնց սպառնում և ստամոքսա-աղիքային
հիվանդությունների քոնկումը, ողինակ՝
անրափարար ջրամատակարարման վայրելը,
վորաեղ չկան, կամ վորաեղ քիչ ևն ջրհոր-
ները և վորաեղ խմելու ջուրն ստանում
են բաց ջրամբարներից: Պատվաստումների
աւշցումը նման վարերում կարող և հասց-
նել այն բանին, վոր համաճարակ առաջա-
նալու դեպքում մեծ քանակությամբ բան-
վորական ձեռքեր յերկար ժամանակով շար-
քից դուրս կգան:

Վերջապես, ինչպես արդեն ասել ենք,
վորաեղ վոր յերեան վորովայնի տիֆի և
գիղենտերիալի կրկնակի հիվանդացումները,
կամ բռնկումները, այնաեղ պետք և կաղ-
մակերպվեն և անմիջապես սկսվեն պատ-
վաստումներ՝ համաճարակի զարգացումը
կանխեռու համար:

Նախքան պատվաստումներին անցնելը
բժիշկը կամ բուժակը բժշկական քննության
ևն յենթարկում բոլոր նրանց, ովքեք
պետք և պատվաստման յենթարկվեն:

Յերիկամունքների վորեն սուբ հիվանդու-
թյուն, սրանի գործունեյության խանգա-
րում, բաց թորախտ, ծանր հյուծում ունե-
ցողներին, յերեխարին ստամոքսա-աղի-
քային սուբ խանգարման և ալլ հիվանդու-
թյուններ ունեցող սարդկանց պատ-
վաստում չեն կատարում մինչև նրանց
առողջանալը: Այսն մի առանձին դեպքում
բժիշկն ինքն և վորոշում տվյալ անձին
պատվաստում կարելի յե անել, թե վոչ:

ՀԱՍՏԱՐԱԿԵՑՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե
ՈԳՆԵ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ
ԿԱՏԱՐԵԼԻՄ

Ստամոքսա-աղիքային հիվանդություն-
ների (գորովանի տիֆ և գլցենտերիա) դեմ
պատվաստումներ կադմակերպելը մեծ դորձ
և ամեններն ել դյուրիխն չեն:

Բնակչության մեջ պատվաստումներ կաղ-
մակերպելու համար առողջապահության տկ-
տիվի և հասարակայնության մասնակցու-

Թյունը պարտադիր պայման և հանդիսաւում:

Գյուղական և քաղաքակին խորհութեանների առողջապահության սնկցիանները, խորհութեաններությունների և կոլտնտեսությունների սանիտարական լիազորները, սանիտարական հանձնաժողովները ձեռնաըշկություններում և հիմնարկներում, պատվաստումներն անցկացնող բժշկական անձնակազմի հիմնական ոգնականները պետք են լինեն:

Ինչով պետք ե արտահայտվի առողջապահության հասարակական կազմակերպությունների աշխատանքը, Ամենից առաջգործակի տիֆն ու դիզենտիրիան կանխելու համար պատվաստումների խոշոր գերն ու նշանակությունը բնակչության խափերին պարզաբանելով:

Բոյորը շե, զոր ծանոթ են պատվաստումների եյությանն ու նշանակությանը, Առողջապահության ակտիվիտանները պետք

ելավ ծանոթ լինեն այդ հարցերին և իրենց գիտցածը հաղորդեն շրջապատին:

Տվալ բնակավարում (բանվորական ավան, խորհութեանություն, կոլտնտեսություն) կամ առանձին ձեռնաըշկությունում, հանրակաղաքանում և այլն պատվաստումներ կատարելուց մի քանի որ առաջ առողջապահության ակտիվը բնակչությանը հայտարարում ե այդ մասին և բացատրում պատվաստումների նշանակությունը:

Զբույցների և պատվաստումների վերաբերյալ զրաւանության բարձրածախն ընթերցում կազմակերպելը, այդ հարցի պարզաբանումը պատի և շրջանակին թերթերում, լայն բացատրական աշխատանքն աշխատավորության մեջ — այս բոլորն առողջապահության ակտիվիտանների պարտականությունն եւ:

Նման սանիտարակութուրական աշխատանքի կազմակերպմանը պետք ե մասնակից դարձեն մոտակա բուժական հիմնարկի բուժանձնակազմը:

ՅԵՐԵ հակավորովայնատիֆային պատվաստումները բուժկայանում չեն կառարվում, առողջապահության սկտիվը պետք է մասնակցի պատվաստումների համար չենք խառնում, ընթերցարան, կարմիր անկյունն և ալլն) գտնելու և շնորհում հարկավոր կարգ ստեղծելու գործին.

Եերբ պատվաստումներն սկսվել են, առողջապահության ակտիվը պետք է հետերի, զորքնակշությունը ժայռակյուն և լրիվ ներկայանա: Պետք է հայտաբերել պատվաստումներից խուսափողներին և նրանց հետքացարական աշխատանքը տանել:

Հակահամաճարակային աշխատանքների կազմակերպման գործում — հասարակայնությունը մեծ ուժ է:

Սամանուածաղիքային վարակիչ հիվանդությունների գեմ պայքարի հնարավորությունները սեր յերկրում շատ մեծ են: Դրանք հարկավոր և ողտագործել մինչև վերջ: Դրա համար ամենից շատ հարկավոր են՝ վողջ աշխատավորության ձեռներեցությաւնն ու ակտիվությունը:

50

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ի՞նչպիսի հիվանդությունները համարվում են վարակիչ	5
Վորովաններ տիֆ և զիվենաներին	8
Ի՞նչպես են վարակվում վորովայնի տիֆով և դիզենտերիայով	15
Ի՞նչպես պետք է պաշտպանվել վորովայնի տիֆով և զիվենաներիայով վարովակելուց	20
Ի՞նչ են տալլիս պատվաստումները	27
Ի՞նչ ոգուտ են տալլիս վորովայնի տիֆի և զիվենաներիայի դեմ կարտավոր պատվաստումները	32
Ի՞նչպես կն կատարում պատվաստումները վորովայնի տիֆի և զիվենաներիայի դեմ	36
Պատվաստումները հետո արդյոք յերկամբ ժամանակ ենում անզգայունակությունը	40
Պետք է արդյոք վախենալ պատվաստումներից վտանգավորմանը	41
Պատվաստումներն ունեմ են անում	45
Հասարակայնությունը պետք է ողնի պատվաստումները կատարելիս	47

51

Թարգմ. Վ., Խորենի ան

Պատ. խմբադիր՝ Լ, Խոր մանդակարգան

Լեզվական խմբադիր՝ Հ, Հարսւթյունային

Տեխ. խմբադիր՝ Լ, Ուսունական

Սրբադիր՝ Հ, Մանուկյան

Գևագիմաֆ լիազոր՝ Ա.—4129, Հրատ. № 4626.

Պատվեր 452, Տիրաժ. 3000,

Բուղթ. 72×105, Տպադր. 1 մամ.

Սեկ. մամ. 33280, նամ.

Հանձնված է արտադրության Օ հոկտեմբերի 1938 թ.

Ստորագրված է ապահովութ. 20 դեկտեմբերի 1938 թ.

Գետերառի և տպարան, Եկրան, Լենինի, 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0266671

ԳԻՒՆԾ 20 Կ.

120

7279

И. Ф. ПЕРС

Прививки против
брюшного тифа
и дизентерии

Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.